



Արտակ Վլադիմիրի Մադալյանը ծնվել է 1977 թ. դեկտեմբերի 6-ին Երևանում: 1994 թ. ավարտել է Երևանի թիվ 96 միջնակարգ դպրոցը: 1997 թ. ընդունվել և 2001 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանը, իսկ 2003 թ. նույն համալսարանի մագիստրատուրան՝ **«Արցախի մեղիքական տոների տոհմաճատերը»** ավարտական թեզով:

2003 թ. Արտակ Մադալյանն աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, նախ՝ որպես կրտսեր գիտաշխատող, ապա՝ գիտաշխատող: Զբաղվում է Արցախի միջնադարյան պատմության ուսումնասիրությամբ: 2007 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն **«Արցախի մեղիքությունները և մեղիքական տոները XVII–XIX դդ.»** թեմայով, որը նույն թվականին լույս է տեսել որպես առանձին մենագրություն:

Ա. Մադալյանը երեք գրքի և շուրջ 50 պատմագիտական հոդվածների հեղինակ է, որոնցից մի քանիսը հրատարակվել են Իտալիայում, Սվաբիայում, Լիբանանում, Ռուսաստանում և Բելառուսում: 2006 թ. Վիեննայի «Հանդես ամսօրեայ» հայագիտական տարեգրքում հրատարակել է Հակոբ Զաքարյան Շուշեցու «Պատմություն գաւառին Արցախու» աշխատությունը: 2007 թ. նրա խմբագրությամբ լույս է տեսել **«Շուշին հայոց քաղաքակրթության օրրան»** գիտական հոդվածների ժողովածուն:

Ա. Մադալյանի գիտական աշխատությունների մյուս ուղղությունը նվիրված է Իրանի նշանավոր սիրակալ Նադիր շահի (1736–1747) գործունեությանը վերաբերող

սկզբնաղբյուրների հայտնաբերմանն ու հրատարակմանը: 2010 թ. նրա աշխատասիրությամբ լույս է տեսել **«Նաղիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները»** գիրքը, որում ընդգրկված են Իրանի XVIII դարի պատմության երկու սկզբնաղբյուրների՝ «Յաղագս պատմութեանցն Պերսիու երկրին» երկի և ռուս պատմագիր Վասիլի Բրատիշչևի «Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նաղիրայ եւ աւագ որդոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց» աշխատության հայերեն թարգմանությունները, որոնք կարող են օգտակար լինել Իրանի և հարակից երկրների XVIII դ. պատմության բազմաթիվ հարցերի լուսաբանման համար:

Ա. Մաղալյանն իր մասնակցությունն է բերել նաև **«Հայոց պատմություն»** սկադեմիական բազմահատորյակի հեղինակային և խմբագրական աշխատանքներին: Մասնակցել է մի շարք միջազգային և համրապետական գիտաժողովների:

Արտակ Մաղալյանի հիմնական աշխատություններն են.

1. Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, 326 էջ:
2. Վասիլի Բրատիշչև, Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Շահ Նաղիրայ եւ աւագ որդոյ նորին Ռզա-Ղուլի Միրզին տրտմալի պատահմանց, աշխատասիրությամբ Ա. Մաղալյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 70 էջ:
3. Նաղիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 168 էջ:
4. Արցախի մելիքական տների տոհմաճառերը, **«Բազմավէպ»**, Վենետիկ–Ս. Ղազար, 2004, թիւ 1–4, էջ 93–121, 2005, թիւ 1–4, էջ 153–193, 2006, թիւ 1–4, էջ 262–292:
5. Արցախի Գիւլիստան գաւառի տիրակալ Մելիք-Բեգլարեանների Հնդկաստանի ճիւղը, **«Հանդէս ամսօրեայ»**, Վիեննա–Երեւան, 2004, թիւ 1–12, էջ 475–492:
6. Յակոբ Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը, **«Հանդէս ամսօրեայ»**, Վիեննա–Երեւան, 2006, թիւ 1–12, էջ 317–394:
7. Վարանդայի մելիքությունը, **«Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան»**, ԼՂՀ կազմավորման 15-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 125–144:
8. Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Գոչայ վանուց» աշխատութիւնը, **«Բանբեր Մատենադարանի»**, N 18, 2008, էջ 283–305:

9. Կուսապատի Աթաբեկյանների դատաստանական գործը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2008, N 1, էջ 3–27:
10. Սղվանից (Գանձասարի) կաթողիկոսների Գավազանագիրքը, «Պատմա-բանասիրական հանդես», 2008, N 3, էջ 268–271:
11. Երուսաղեմի Հայոց պատրիարք Պողոս Վանեցու նամակը Արցախի մելիքներին, «Պատմա-բանասիրական հանդես», 2009, N 2–3, էջ 262–265:
12. Արցախի մելիքությունները և Ղարաբաղի խանության ծագումը, «Հայոց պատմության հարցեր», N 10, 2009, էջ 87–112:
13. Генеалогия Мелик-Исраэлянов, правителей Джраберда (XVII–XIX вв.), «Генеалогия народов Кавказа. Традиции и современность», Материалы международной научно-практической конференции. Владикавказ, 2009, с. 122–126.
14. Арцахские меликства и возникновение Карабахского ханства, «Русский сборник», том VIII, Москва, 2010, с. 7–25.
15. Հայաստանը 1730–1740-ական թթ., «Հայոց պատմություն», հատոր III, գիրք I, Երևան, 2010, էջ 59–64: